

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2018 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 12-Ի N 451-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի «Գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 29-ի N 1394-Ն և 2015 թվականի փետրվարի 5-ի N 117-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հունվարի 13-ի N 15 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 451-Ն որոշման հավելվածում՝

1) 3-րդ և 5-րդ կետերում «մայիսի 15-ը» բառերը փոխարինել «հունիսի 8-ը» բառերով.

2) 4-րդ կետում «հունիսի 1-ը» բառերը փոխարինել «հունիսի 25-ը» բառերով.

3) 5-րդ կետում «հունիսի 1-ը» բառերը փոխարինել «հուլիսի 1-ը» բառերով.

4) 8-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետում «գիտական հրապարակումների, ինչպես նաև հայոց լեզվից կամ հայ գրականությունից կամ հայ ժողովրդի պատմությունից մենագրությունների կամ ստացած արտոնագրերի կամ գրանցված հեղինակային իրավունքների» բառերը

փոխարինել «ինչպես նաև բարձրագույն որակավորման կոմիտեի ցանկում ընդգրկված ամսագրերում հրատարակված գիտական հոդվածների» բառերով.

բ. 4-րդ ենթակետում «գնահատականի» բառից հետո լրացնել «(ՄՈԳ)» բառը, իսկ «շրջանակներում» բառից հետո՝ «որը պետք է կազմի ՄՈԳ-ի առավելագույն արժեքի առնվազն 90 %-ը» բառերը:

2) 9-րդ կետում «70» և «80» թվերը համապատասխանաբար փոխարինել «60» և «65» թվերով.

3) լրացնել նոր 9.1 կետ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«9.1 Գերակայություն ճանաչված յուրաքանչյուր ոլորտի մասնագիտություններով նշանակալի նվաճումներ են համարվում քաղաքացու՝ աշխարհի լավագույն բարձրագույն ուսումնական հաստատությունների ակադեմիական վարկանիշավորման <http://www.shanghairanking.com/#> կայքի տվյալ տարվա ցանկերի առաջին հինգ տասնյակում ընդգրկված հաստատություններ բակալավրի (դիպլոմավորված մասնագետի, ինտեգրացված), մագիստրատուրայի և ասպիրանտուրայի կրթական ծրագրերով սովորելու կամ դիմորդ հանդիսանալու հանգամանքը՝ ուսման և կացության համար անհրաժեշտ ֆինանսական աղբյուրների (scholarship) վերաբերյալ փաստաթղթերի առկայությամբ:»:

4) «Նշանակալի նվաճումների ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանություն» վերտառությամբ Ձևի՝

ա.1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Գիտական հրատարակումներ (հոդվածներ): Գիտական հոդված՝ «Web of Knowledge» և «Scopus» միջազգային գիտատեղեկատվական շտեմարանների, ինչպես նաև Բարձրագույն որակավորման կոմիտեի ցանկի հրատարակումներում ընդգրկված հղման ենթակա հոդված:

$$E_1 = \sum A \frac{(1+C/10)^{1/3}}{N^{1/3}}$$

յուրաքանչյուր հրատարակման (հոդվածի) համար՝

A-ն գիտատեղեկատվական շտեմարաններում ամսագրի ընդգրկվածությամբ որոշվող գործակիցն է՝

IF*	որոշված է	<0.2	0.2-0.5	0.5-1.0	1.0-2.0	2.0-5.0	>5.0
A**	3	5	10	13	15	17	20

*) IF՝ ամսագրի տվյալ տարվա ազդեցության գործակիցն ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների:

**) Սահմանային արժեքի դեպքում վերցվում է առավելագույնը:

Շ-ն հղումների քանակն է՝ առանց ինքնահղումների.

N-ը համահեղինակների կամ համամրցանակակիրների ընդհանուր թվաքանակն է:»:

բ. 5-րդ կետում «երաշխավորագիրը» բառից հետո լրացնել «և դիմորդի հետ հարցազրույցը» բառերը.

գ. 7-րդ կետում աղյուսակը շարադրել նոր խմբագրությամբ՝

«

Կրթական ծրագիրը	Համամասնության գործակցի արժեքը				
	k_1	k_2	k_3	k_4	k_5
Մագիստրատուրա	0.75	0.5	0.5	2.0	1.25
Ասպիրանտուրա	1.0	0.5	0.5	2.0	1.0

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշմամբ հաստատված՝ գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր գինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգի և պայմանների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից գերակայություն ճանաչված յուրաքանչյուր ոլորտի մասնագիտություններով քաղաքացիների նշանակալի նվաճումներից են համարվում՝ դիմելու օրվան նախորդող երեք տարվա ընթացքում տվյալ մասնագիտության գծով **միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններերում գիտական հրապարակումները, ինչպես նաև հայոց լեզվից կամ հայ գրականությունից կամ հայ ժողովրդի պատմությունից մենագրությունները կամ ստացած արտոնագրերը կամ գրանցված հեղինակային իրավունքները:**

Ներկայացվող նախագծով առաջարկվում է փոփոխել պարտադիր գինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու նպատակով դիմած քաղաքացիների՝ գիտության և կրթության բնագավառներում ունեցած նշանակալի նվաճումների գնահատման չափանիշների սահմանային արժեքները՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Մենագրությունը մեկ կամ մի քանի հեղինակների կողմից որոշակի թեմատիկայի նվիրված գիտական աշխատություն է, որը հիմնված է նաև հեղինակների սեփական հրապարակումների վրա՝ գիտական հոդվածների տեսքով: Իսկ վերջիններս գնահատվում են ըստ նախագծում ներկայացված կարգի, ներառյալ հայոց լեզվին կամ հայ գրականությանը կամ հայ ժողովրդի պատմությանը վերաբերող հետազոտությունները:

Նախագծով առաջարկվում է **միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններից բացի ներառել նաև** Բարձրագույն որակավորման կոմիտեի ցանկում ընդգրկված ամսագրերը, որոնք ներառում են բոլոր ուղղությունները, այդ թվում՝ հայոց լեզուն, հայ գրականությունը և հայ ժողովրդի պատմությունը: Արտոնագրերը և գրանցված հեղինակային իրավունքները նույնպես հիմնված են գիտական ամսագրերում հրատարակված հետազոտական արդյունքների վրա:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

<<Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների համաձայն՝ գիտության, կրթության, մշակույթի, արվեստի և սպորտի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում կարող է տրվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշմամբ, որով սահմանվում են գիտության և կրթության բնագավառում նշանակալի նվաճումների գնահատման չափանիշներ, որոնց սահմանային արժեքների բավարարման դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին տրվում է պարտադիր զինվորական ծառայության տարկետման իրավունք: Սույն նախագծով առաջարկվում է իջեցնել կրթական ծրագրի շրջանակներում տարկետման իրավունք տալու սահմանային արժեքները՝ մագիստրոսի կրթական ծրագրի դեպքում՝ 70-ից մինչև 60, իսկ ասպիրանտական կրթական ծրագրի դեպքում՝ 80-ից մինչև 65 բալային միավոր, ինչպես նաև գիտական ամսագրերի ցանկում ընդգրկել նաև բարձրագույն որակավորման կոմիտեի ցանկի ամսագրերը:

Օտարերկրյա բուհերում սովորող ուսանողների տարկետում տրամադրելու խնդրի արդիականությունը պայամավորված է երկու հիմնական գործոնով: Առաջին՝ հաշվի առնելով որակյալ մասնագիտական կադրերի անհրաժեշտությունը Հայաստանի տարբեր ոլորտներում, ինչպես նաև որոշ ոլորտներում որակյալ մասնագետների բացակայությունը, օտարերկրյա հեղինակավոր բուհերում կրթություն ստացող երիտասարդներին տարկետման տրամադրումը կարող է հսկայական նշանակություն ունենալ երկիրը որակյալ կադրերով համալրելու տեսանկյունից: Երկրորդ՝ հաշվի առնելով, որ հայրենադարձությունը հանդիսանում է Հայաստանի համար կարևոր առաջնահերթություն: Արտերկրում բնակվող և այնտեղ կրթություն ստացող ՀՀ քաղաքացիների համար հայրենադարձության համար բարենպաստ պայմանների շարքում է նաև վերջիններս կողմից արտասահմանյան համալսարաններում որակյալ կրթություն ստանալու հնարավորության ստեղծման հանգամանքը:

Հաշվի առնելով վերը նշվածը, տարկետման տրամադրումը աշխարհի լավագույն բարձրագույն ուսումնական հաստատությունների ակադեմիական վարկանիշավորման ցանկերում ներառված բուհերում բակալավրիատ, մագիստրատուրա և ասպիրանտուրա ընդունված և ուսման համար անհրաժեշտ ֆինանսավորումն ապահովված ուսանողներին՝

հետագայում հնարավորություն կընձեռի ուսման ավարտից հետո վերադառնալու Հայաստան և գիտելիքները ներդնելու երկրի զարգացման գործում:

3. Կարգավորման նպատակը և բնույթը

Որոշման նախագծի համաձայն իջեցվում են կրթական ծրագրի շրջանակներում տարկետման իրավունքի տալու սահմանային արժեքները (մագիստրոսի կրթական ծրագրի դեպքում՝ 70-ից մինչև 60, իսկ ասպիրանտական կրթական ծրագրի դեպքում՝ 80-ից մինչև 65 բալային միավոր), ինչպես նաև գիտական ամսագրերի ցանկում ընդգրկել նաև Հայաստանի Հանրապետության բարձրագույն որոկավորման կոմիտեի ցանկի ամսագրերը: Առաջարկվող փոփոխություններն ուղղված են ապահովելու գիտության և կրթության բնագավառներում նշանակալի ներդրում ունեցող քաղաքացիներին իրենց գործունեությամբ անընդմեջ զբաղվելու հնարավորությունների իրացմանը:

4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից:

5. Ակնկալվող արդյունքը

Որոշման նախագծի ընդունմամբ կընդլայնվի գիտության և կրթության բնագավառներում գործունեություն ծավալող (ուսումնառություն իրականացնող) և այդ բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրամադրելու շահառուների շրջանակը:

6. Այլ տեղեկություններ չկան:

7. Նախագիծը քննարկվել է շահառուների լայն շրջանակում:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ

Որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ ՀՀ պետական բյուջեի ծախսերի կամ եկամուտների ավելացման կամ նվազեցման վերաբերյալ

Որոշման նախագծի ընդունումը ՀՀ 2018թ. և հետագա տարիների պետական բյուջեներում լրացուցիչ ծախսերի անհրաժեշտություն չի առաջացնում:

Ա ՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ պաշտպանության և ՀՀ արդարադատության նախարարությունների կողմից արված դիտողությունների և առաջարկությունների

Նախարարության անվանումը	Դիտողություններ և առաջարկություններ	Նշումներ կատարման վերաբերյալ
<p align="center">ՀՀ պաշտպանության նախարարություն</p>	<p>1. Սկզբունքային առարկություններ չկան: Միաժամանակ առկա է մտավախություն, որ քաղաքացու կողմից գիտության կամ կրթության բնագավառում նշանակալի նվաճումներ ունենալու չափով չհիշելիքների և դրանց հաշվարկման մեթոդաբանության առաջարկվող փոփոխությունները կհանգեցնեն նախորդ տարիների համեմատությամբ ուսումը շարունակելու կապակցությամբ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տրվող տարկետումների քանակի ավելացման, ինչը տրամաբանական չէ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախկին «Զինապարտության</p>	<p>1. Ընդունվել է ի գիտություն:</p>

	<p>մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 26.04.2012թ. N597-Ն և 05.02.2015թ. N 117-Ն որոշումների հիման վրա ՀՀ կառավարության կողմից տրվող պետական պատվերի քանակի շրջանակներում ուսումը շարունակելու հիմքով տարկետման իրավունք էին ձեռք բերում միայն համապատասխան ընդունելության քննությունների արդյունքներով բարձր միավորներ հավաքած քաղաքացիները:</p> <p>2. Առաջարկվում է՝</p> <ol style="list-style-type: none"> 1) Որոշման 3-րդ և 5-րդ կետերում «մայիսի 15-ը» բառերը փոխարինել «հունիսի 8-ը» բառերով. 2) 4-րդ կետում «հունիսի 1-ը» բառերը փոխարինել «հունիսի 25-ը» բառերով. 3) 5-րդ կետում «հունիսի 1-ը» բառերը փոխարինել «հուլիսի 1-ը» բառերով: 	<p>2. Կատարված է:</p>
<p>ՀՀ արդարադատության նախարարություն</p>	<p>1.«Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ նախագիծ) 1-ին կետի 1-ին ենթակետի «ա.» պարբերության համաձայն առաջարկվում է գերակայություն ճանաչված յուրաքանչյուր ոլորտի մասնագիտություններով մագիստրատուրայի և ասպիրանտուրայի կրթական ծրագրերով սովորող (կամ դիմորդ հանդիսացող) քաղաքացիների նշանակալի նվաճումները գնահատել ըստ դիմելու օրվան նախորդող երեք տարվա ընթացքում տվյալ մասնագիտության գծով միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում, ինչպես նաև</p>	<p>1. Կատարված է:</p>

բարձրագույն որակավորման կոմիտեի ցանկում ընդգրկված ամսագրերում հրատարակված գիտական հոդվածների, որի արդյունքում իրավակարգավորումից դուրս է մնում գերակայություն ճանաչված յուրաքանչյուր ոլորտի մասնագիտություններով մագիստրատուրայի և ասպիրանտուրայի կրթական ծրագրերով սովորող (կամ դիմորդ հանդիսացող) քաղաքացիների նշանակալի նվաճումների գնահատումը **ըստ հայոց լեզվից կամ հայ գրականությունից կամ հայ ժողովրդի պատմությունից մենագրությունների կամ ստացած արտոնագրերի կամ գրանցված հեղինակային իրավունքների:** Նույնը վերաբերում է նաև Նախագծի 1-ին կետի 4-րդ ենթակետի «ա.» պարբերության համաձայն նոր խմբագրությամբ շարադրվող 1-ին կետում ներկայացված իրավակարգավորմանը: Հետևաբար, հաշվի առնելով այս դիտարկումը, գտնում ենք, որ անհրաժեշտ է լրամշակել նախագծի հետ ներկայացված հիմնավորումը, անդրադառնալով նաև վերը նշված հարցերին՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 5-ի «Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ցուցումներին հավանություն տալու և ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 42 արձանագրային որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 13 արձանագրային որոշմամբ նախատեսված հավելվածի 316-րդ կետի պահանջների:

	<p>2. Նախագծի 1-ին կետի 4-րդ ենթակետում անհրաժեշտ է «բաժնի» բառը փոխարինել «վերտառությամբ Ձևի» բառերով, քանի որ «Նշանակալի նվաճումների ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանություն»-ը սահմանվում է ըստ Ձևի:</p> <p>3. Նախագծի 1-ին կետի 4-րդ ենթակետի «բ.» պարբերությամբ ներկայացված կարգավորման վերաբերյալ գտնում ենք, որ այն ավելորդ է և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի համաձայն անհարկի կրկնությունները բացառելու նկատառումից ելնելով անհրաժեշտ է այն հանել, քանի որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշմամբ սահմանված «Նշանակալի նվաճումների ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանություն» վերտառությամբ Ձևի 5-րդ կետն ինքնին սահմանում է հանձնաժողովի հետ հարցազրույցը, հարցազրույցի ընթացքում հանձնաժողովի կողմից գնահատվելիք համապատասխան հանգամանքները հաստատող փաստաթղթերը, ուստի անհիմն ենք համարում որպես հարցազրույցի ընթացքում հանձնաժողովի կողմից գնահատվելիք փաստ համարել ինքնին դիմորդի հետ հարցազրույցը:</p> <p>4. Նախագիծն անհրաժեշտ է համաձայնեցնել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ:</p>	<p>2. Կատարված է:</p> <p>3. Չի ընդունվում, քանի որ Ձևի 5-րդ կետում սահմանվում է, որ՝ Հարցազրույցի ընթացքում հանձնաժողովի կողմից գնահատվում են քաղաքացու մոտիվացիոն նամակը, գիտական և գիտատեխնիկական գործունեության տվյալ բնագավառի երկու ներկայացուցիչների երաշխավորագրերը, համապատասխան կրթական ծրագիրն իրականացրած բարձրագույն ուսումնական հաստատության երաշխավորագիրը: Այս ձևակերպումը տարրնթերցման առիթ էր տալիս: Կատարվող լրացմամբ կհստակեցվի հարցազրույցին դիմորդի անմիջական մասնակցության հարցը:</p> <p>4. Կատարված է:</p>
--	--	---

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 12-Ի N 451-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

h/ h	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Սիմոն Սիմոնյան 29.05.2018 14:58:30	Փոփոխությունները, անկասկած, մեղմացնում են գործող չափանիշները, բայց որոշ խնդիրներ չեն լուծվում, մասնավորապես՝ 1. Գնահատականների հարցում ՀՀ կրթական համակարգում կա անհամաչափություն. օրինակ՝ Ֆրանսիական համալսարանում գործում են գնահատման ֆրանսիական չափանիշներ, որի արդյունքում ուսանողների միջին որակական գնահատականը էապես ցածր է լինում պետական բուհերի ուսանողների ՄՈԳ-երի համեմատ: Առարկաների առնվազն կետը, եթե ոչ ավելին, դասավանդվում են Ֆրանսիացի դասախոսների կողմից, որոնց համար, օրինակ, 14-ը համարվում է առավելագույն գնահատականը: Արդյունքում՝ առաջանում է անհավասար մրցակցություն տարբեր ԲՈՒՀ-երի ուսանողների միջև: Կարծում եմ՝ պետք է քննարկել այս հատվածը: 2. Գիտակրթական մրցանակների մեջ ներառված չեն կրթաթոշակները, մինչդեռ վերջիններս իրապես համարվում են բարձր առաջադիմության չափանիշ: 3. Ասպիրանտուրա ընդունվելու գործող չափանիշների շարքում մեծ ուշադրության չի արժանացել ընտրվող թեզի արդիականությունը, ինչպես նաև դրա հնարավոր ազդեցությունը գիտության մեջ և պրակտիկայում: Կարծում եմ՝ հնարավոր է այս հարցն ընդգրկել հարցազրույցի շրջանակներում: 4. Ելնելով իմ կողմից նշված 3-րդ կետի կարևորությունից՝ առաջարկում եմ բարձր գործակից սահմանել հարցազրույցի համար:	1. Առաջարկվող չափանիշների մեջ ՄՈԳ-ի ներառումը ենթադրում է բուհ-երի կողմից գնահատման միևնույն մոտեցման օգտագործում և նպատակահրմար չէ ընդգրկել չափանիշի կախվածությունը կոնկրետ կազմակերպությունից: 2. Չափանիշների պետք է լինեն միանշանակ որոշվող կամ մեկնաբանվող և հնարավորինս չափելի: 3-4. Թեզի թեմայի արդիականության և կարևորության հարցն ընդգրկվելու է հարցազրույցի հարցաշարում:	Չի ընդունվել:
2	Մարիամ Լևոնյան 28.05.2018 18:20:09	Բարև Ձեզ Ինդրում եմ իմ կողմից նախորդ գրածն անտեսել փոխարենն ընդունել այս մեկը: Այս նախագծում նախատեսվող փոփոխություններում առաջարկում եմ դիտարկել հետևյալը. 1.Քանի որ մագիստրատուրա ընդունվելու համար դիմորդից պահանջվում է ՄՈԳ-ի գնահատականը, իսկ ասպիրանտուրայում ոչ, ուստի այս փուլում ասպիրանտուրայում սովորել ցանկացողների համար ՄՈԳ-ի տոկոսային սահմանափակումը հաշվի առնելն այնքան էլ նպատակահարմար չէ: Հնարավոր է	1. ՄՈԳ-ի նեքին սահմանի ներմուծումը հնարավորություն է տալիս կատարել նախնական ընտրություն և առանձնացնել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին: 2-3. Նշանակալի նվաճումների ցուցանիշների հաշվարկման	Չի ընդունվել:

		<p>մագիստրատուրայում սովորող ուսանողն այդ պատճառով այնքան էլ ուշադրություն չի դարձրել գնահատականին՝ հատկապես ոչ մասնագիտական առարկաների, փոխարենը ընդգրկված է եղել տարբեր գիտական ծրագրերում: Իսկ ՄՈԳ-ի տոկոսային սահմանափակում դնելով կիրառվում է օրենքի հետադարձ ուժը: 2.Եթե մագիստրատուրա ընդունվել ցանկացող դիմորդը չունի տպագրված հոդվածներ, գիտաժողովների մասնակցություն և մրցանակներ, իսկ ՄՈԳ-ը ենթադրենք 17.5 է, հարցազրույցից էլ ստանում է առավելագույն միավոր, ապա ստացվում է, որ նա հավաքում է անցողիկ միավոր՝ $17.5 * 2 + 20 * 1.5 = 60$, և ուրեմն չլինելով նշանակալի նվաճում ունեցող ուսանող, ստանում է տարկետում, ինչը ևս արդար չէ:</p> <p>Սակայն այս նույն իրավիճակում ասպիրանտուրա հնարավոր չէ ընդունվել, քանի որ անցողիկ շեմը 65 է: Ավելին. Եթե մագիստրատուրա դիմող ուսանողը բոլոր 4 չափորոշիչներով ստանում է առավելագույն միավոր, սակայն ՄՈԳ-ը 90%-ից ցածր է, ապա նա հավաքում է 60 միավոր և ստանում տարկետում, իսկ նույն պայմաններում ասպիրանտուրայի դիմորդը չի ստանում տարկետում քանի որ անցողիկ միավորը 65 է: Այսինքն միայն մեկ բաղադրիչի ազդեցության պատճառով ասպիրանտուրայում սովորել ցանկացողը կարող է զրկվել ընձեռված հնարավորությունից, որը կարծես թե այնքան էլ համահունչ չէ նախագծի ընդհանուր բարեփոխված տարբերակի հետ: 3.Որպես վերը նշված հարցերի լուծում առաջարկում եմ սույն նախագծի 8-րդ կետի 4-րդ ենթակետը տարանջատել 2 մասի, 1-ին մասով սահմանել մագիստրատուրայի համար սահմանելով ՄՈԳ-ի տոկոսային ազդեցության արդեն իսկ առաջարկվող տարբերակը (սրանով բացառում ենք միայն ցածր ՄՈԳ-ով ընդունվելու տարբերակը), իսկ 2-րդ մասով ասպիրանտուրայի համար ՄՈԳ-ի գնահատականի տոկոսային սահմանափակումը չկիրառել, այսինքն հաշվարկի համար հիմք ընդունել փաստացի ունեցած ՄՈԳ-ը (սրանով բացառում ենք օրենքի հետադարձ ուժի կիրառումը ասպիրանտուրա ընդունվելու ցանկություն ունեցողներին): Մյուս բոլոր փոփոխություններն ու լրացումներն անկասկած արդարացի են:</p> <p>Շնորհակալություն</p>	<p>առաջարկվող մեթոդաբանությունը ենթադրում է, որ պետք է ապահովվի մագիստրատուրա ընդունվելու հնարավորությունը միայն ՄՈԳ-ի և հարցազրույցի հիման վրա, իսկ ասպիրանտուրա ընդունվելու դեպքում՝ նաև որոշակի գիտական արդյունքների հիման վրա:</p>	
3	Մարիամ Լևոնյան 28.05.2018 14:39:37	<p>Բարև Ձեզ Այս նախագծում նախատեսվող փոփոխություններում առաջարկում եմ դիտարկել հետևյալը. 1.Քանի որ մագիստրատուրա ընդունվելու համար դիմորդից պահանջվում է ՄՈԳ-ի գնահատականը, իսկ ասպիրանտուրայում ոչ, ուստի այս փուլում ասպիրանտուրայում սովորել ցանկացողների համար ՄՈԳ-ի հաշվի առնելն այնքան էլ նպատակահարմար չէ:</p>		

		<p>Հնարավոր է մագիստրատուրայում սովորող ուսանողն այդ պատճառով այնքան էլ ուշադրություն չի դարձրել գնահատականին՝ հատկապես ոչ մասնագիտական առարկաների, փոխարենը ընդգրկված է եղել տարբեր գիտական ծրագրերում: 2.Եթե մագիստրատուրա ընդունվել ցանկացող դիմորդը չունի տպագրված հոդվածներ, գիտաժողովների մասնակցություն և մրցանակներ, իսկ ՄՈԳ-ը ենթադրենք 17.5 է, հարցազրույցից էլ ստանում է առավելագույն միավոր, ապա ստացվում է, որ նա հավաքում է անցողիկ միավոր՝ $17.5 \cdot 2 + 20 \cdot 1.5 = 60$, և ուրեմն չլինելով նշանակալի նվաճում ունեցող ուսանող, ստանում է տարկետում, ինչը ևս արդար չէ: Սակայն այս պայմաններով ասպիրանտուրա հնարավոր չէ ընդունվել, քանի որ անցողիկ շեմը 65 է: 3.Որպես վերը նշված հարցերի լուծում առաջարկում եմ սույն նախագծի 8-րդ կետի 4-րդ ենթակետը տարանջատել 2 մասի, 1-ին մասով սահմանել մագիստրատուրայի համար սահմանելով ՄՈԳ-ի արդեն իսկ առաջարկվող տարբերակը, իսկ 2-րդ մասով ասպիրանտուրայի համար ՄՈԳ-ի գնահատականը հաշվի չառնել, ինչպես որ ասպիրանտուրա ընդունվելու ժամանակ չի պահանջվում: Վերոհիշյալ առաջարկները նաև այնքանով են արդարացի, որ իրենց մեջ բացառում են օրենքի հետադարձ ուժի ազդեցությունը, ինչը բացակայում էր սույն օրենքի նախկին տարբերակի մեջ: Մյուս բոլոր լրացումներն ու փոփոխություններն անկասկած շատ արդարացի են: Ընտրակալություն</p>		
4	Karapet Martirosyan 28.05.2018 00:26:49	<p>Հարգելի հեղինակներ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ-ում նախատեսվող փոփոխություններն ընդհանուր առմամբ տեղին են, ուղղակի մեկ նկատառում եմ ուզում անել. ՄՈԳ-ի մասով կարծում եմ կարելի է սահմանափակում չկիրառել, քանի որ կան ԲՈՒՀ-եր որտեղ գնահատականները բարձր են դնում, իսկ որոշ ԲՈՒՀ-երում՝ ցածր, հիմնականում ոչ մասնագիտական առարկաներից: Եթե այս սահմանափակումը վերացվի, ավելի արդար կլինի մրցակցությունը: Եթե տվյալ բնագավառում ուսանողն ունի հրատարակած հոդվածներ, գիտական կոնֆերանսներին մասնակցություն, արժանացել է տարբեր մրցանակների, սակայն ինչ որ մի քանի դասախոսների կամ տվյալ ԲՈՒՀ-ի կամայականությունների պատճառով չի կարողացել հասնել այդ մինիմում շեմին, ապա հնարավորություն չտալ այդպիսի ուսանողին շարունակելու զարգացնել գիտությունը մեղմ ասած այնքան էլ արդար չի: Հույս ունեմ, որ ի նկատի կունենաք այս փոքրիկ</p>	<p>ՄՈԳ-ի մասով ներքին սահմանի կիրառումը, ինչպես նաև առաջարկվող չափանիշների մեջ կրթական մրցանակների ընդգրկումը հնարավորություն է տալիս առանձնացնել կրթության բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող ուսանողներին:</p>	Զի ընդունվել

		նկատառումը: Շնորհակալություն		
--	--	------------------------------	--	--